ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից փետրվարի 21-ի նիստում քննարկված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է փոխել «օրենսդրական ակտ» հասկացությունը, տալ ընդհանուր սահմանում, ոչ թե թվարկել ակտերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է 2-րդ հոդվածում ներառել նաև կարգավորման ազդեցության գնահատման հասկացությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Փորձաքննության չեն ենթարկվում հանրաքվե կամ ընտրություններ նշանակելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ընտրությունների	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը»:		
4.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 22-րդ հոդված	Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենսդրության պաշտոնական թարգմանությունը հայերենից օտար լեզու իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 38-րդ հոդված	Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Նորմատիվ իրավական ակտը անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվել կամ կիրառվել է հակասելով՝ ավելի բարձր իրավաբանական ուժ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			ունեցող նորմատիվ իրավական ակտին»:		
6.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 38-րդ հոդված	Առաջարկվում է հանել «իրավական ակտը չեղյալ ճանաչելը» հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
7.	**ՀՀ կառավարություն**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	Կատարվել են մի շարք առաջարկություններ, որոնք արտացոլված են նախագծին կից ներկայացված փոփոխությունների տեղեկանքում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**